Արձանագրություն N 2

ԵՐՋԷԿ-ՊԸԱՇՁԲ 11/17 ծածկագրով «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի 110կՎ ենթակայանի 110 կՎ անջատիչների նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի

ք. Երևան 11 ապրիլի 2017թ. ժ. 10:00

Մասնակցում էին

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Գևորգյանը |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ա. Ղուալմյանը |
| | Պ. Բոշնաղյանը |
| | Լ. Օհանյանը |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ա. Պետրոսյանը |

Նիստին մասնակցում էր «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի լիազորված անձ փոխտնօրեն Վլադիմիր Մարգարյանը:
Գնումների պլանով նախահաշվային գինը 8 000 000(ութ միլիոն) ՀՀ դրամ է:

Նիստի օրակարգը

1. ԵՐՋԷԿ-ՊԸԱՇՁԲ 11/17 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին:

2. Հրավեր ներկայացրած մասնակցի գրաված տեղի և մասնակցից համաձայն հրավերի պահանջվող փաստաթղթերի մասին:

3. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի 110կՎ ենթակայանի 110 կՎ անջատիչների նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

Հարց 1. ԵՐՋԷԿ-ՊԸԱՇՁԲ 11/17 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին՝

1.1. Հայտ է ներկայացրել մեկ կազմակերպություն՝

- «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ – (հասցեն՝ ք. Երևան, Արցախի 4-դ նրբ, տ 6),

1.2. «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ն հայտը ներկայացրել է փակ ծրարների մեջ, ծրարների վրա, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի, գրված է Պատվիրատուի անվանումը, հայտերի ներկայացման հասցեն, ընթացակարգի ծածկագիրը, «Չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը, հայտը ներկայացնողի անվանումը, հասցեն, հեռախոսը:

1.3. «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված են հրավերով նախատեսված բոլոր հավելվածները, տուժանքի մասին համաձայնությունը և վճարման պահանջագիրը, լիցենզիայի պատճենը:

1.4. Համաձայն հրավերի ներկայացվել է հրավերի փաստաթղթերի մեկ բնօրինակ, մեկ պատճեն:

1.5. Հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի գնային առաջարկը հետևյալն է՝ 7 919 939 (յոթ միլիոն ինը հարյուր տասնիննը հազար ինը հարյուր երեսունիննը) ՀՀ դրամ, այդ թվում ԱԱՀ-ն:

Հարց 2. Հրավեր ներկայացրած հայտի և մասնակցի զրաված տեղի մասին:

Հանձնաժողովը որոշեց՝

2.1. Ներկայացված հայտի հիման վրա առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվել «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ին:

2.2 Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանին՝

- Սույն նիստին հաջորդող աշխատանքային օրը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ հարցումը:
- Սույն նիստի հաջորդ օրը www.gnumner.am կայքում հրապարակել հայտի բացման նիստի արձանագրությունը:
- Ծանուցել առաջին տեղ զրաված մասնակիցին՝ «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ին, ՀՀ կառավարության 2015թ-ի հունվարի 30-ի թիվ 105-ն որոշմանը կից հավելվածի (գնման գործընթացի կարգի) 47-րդ կետի 2-րդ ենթակետի համապատասխան, երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու հրավերով սահմանված թիվ 5 հավելվածը, թիվ 3.1, 3.3 և 3.6 հավելվածները հիմնավորող փաստաթղթերը:

Հարց 3. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի 110կՎ ենթակայանի 110 կՎ անջատիչների նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանին՝

1.1. Սույն արձանագրության 2-րդ կետով պահանջվող փաստաթղթերը մասնակցից և ՀՀ ֆինանսների նախարարությունից եզրակացությունը ստանալու օրվան հաջորդող օրը հանձնաժողովի անդամներին տրամադրել գնահատման թերթիկների երկուական օրինակ:

1.2. Հանձնաժողովի անդամներից գնահատման թերթիկները ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում ամփոփել և հրավիրել գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ա. Գևորգյան

Անդամներ՝ Ա. Ղուկասյան

Պ. Բոշնաղյան

Լ. Օհանյան

Քարտուղար՝ Ա. Պետրոսյան